

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

ճարեկան ֆըք. 10

վեցամսեայ " 5

Արտասահման

ճարեկան ֆըք. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք եւ տպութիւնք

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզէք "Հայելի"ին մէջ աղոտ երեւնալ,

Պարտք սիրուն եւ ազնիւ դիմք մը ունենալ:

ԲԱՑՈՒՄՆ Գ. ՇՐՋԱՆԻ

ԲՈԺՈԺԻԿԻ ԱԹՈՌԱՃԱՌԸ

Տեսարբ Երեսփոխանք .

"Հայելի"ի Գ. տարեշրջանը բանալուս առթիւ, բաղդաւոր կը համարիմ զիս իմացընել Ձեզի թէ՛ արտաքին քաղաքականութիւննիս փոփոխութիւնն մը կրած չըլլալով, մեր յարաբերութիւնները լաւ վիճակի մէջ են բոլոր . . . խանութպանութեանց հետ . բայց 'ի գասապ Մէհմէտէն ու անոր հաւատարիմ եղանագ քօսի վիլեամէն, որոնց ձեռքէն անշուշտ եմ թէ վերջապէս օր մը պիտի ազատինք:

Ներքին, այն է ազգային քաղաքականութիւննիս անդեկ նաւու մը պէս տակաւին երբեք առտանալ վիճակի մը մէջ է. բայց կը յուսամ թէ քիչ ատենէն յաջող ճամբու մը մէջ պիտի մտնէ, ձեր հետեւիք խոհական ընթացքով:

Ընկերական ու ընտանեկան վիճակնիս ալ դիտցածնուդ պէս է. ոչ առաջ գացած ունի,

ոչ ետեւ, ոչ վար ոչ վեր. տակաւին կը շարունակենք զիրար չի բաշելով՝ կործանել. տակաւին անկարելի է հագուստի կապուստի տեսակէտով աղքատին կինը հարուստին կինէն զանազանել. նոյնպէս կարգ մը ունեւոր բայց ուսեալ բամբասողութիւնները՝ շքուոր բայց անուս բամբասողութիւններէն որոշել. տակաւին մեծ լեզէն մը կը կազմէ յափիթալութիւնն ու զէվզէկութիւնը. կան նաեւ ընտանեկան խաղաղ յարկերէն ներս սպրդող գառնազգեստ գայլեր, որոնք շահատակութիւններն 'ի գործ դնելու համար կուզեն նոյն յարկերէն դուրս վանել սէրն ու խաղաղութիւնը, եւ որոնք՝ իրենց ճիւղալային դիպը ցոյց տալով միամիտները զգուշացնել ուզող "Հայելի"ին վրայ յարձակելով՝ կը ճգնին զայն յոշոտել, բայց միշտ ետ կը մեղուին աւանդաբար:

Գալով յեղ. կուսակցութեանց, անոնք աններդաշնակ նուագարանի մը կը նմանին. ոմանք "կօրիւ" կը պոռան, ոմանք "նստինք" կը գոչեն ու ոմանք ալ "քնանանք" կըսեն: Բնական է որ ամեն ատեն կօրիւ, ամեն ատեն նստիլ ու ամեն ատեն քնանալ չըլլար. ուստի Ձեր խոհականութեանը կոչում կընենք, պարագայն, տեղն ու ժամանակը աչքի

առջև բերելով, ըստ այնմ հետևիլ անոնց ըստծներուն :

Գալով մեր (Հայելիի) պիւտճէին, այս մասին մէկ քանի նոր օրէնքներ պիտի ներկայացուն ձեզի քուէարկելիք, որոնցմով պիտի կարենանք հաւասարակշռել ներկայ 91-900 շրջանի ելեմուտքնիս և առաջըր նաեւ կարգ մը ձրիաճարակ ընթերցողներու, որոնք գրական ասպարէզի ժանտախտներն են :

Երկինք Չեղի կար և զօրութիւն ու անոնց ամուր երեսին ալ կակղութիւն շնորհէ ամէն :

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան Սուրհանդակ)

Այս շաբթու Պատրիարքարանէն 300 ֆակիի գումար մը շրջուած է վան, բացի այն 1,500 օսկիէն, զոր հետը կը տանի Ներսէս Եպիսկոպոս Ասլանեան :

— Հայ և Աթուրիկ պատրիարքարանաց մէջ եղած կարգադրութեան մը համաձայն, այսուհետև խմբովին կրօնափոխութիւն պիտի չըլլայ, անհատական աղերսագիրները միայն նկատի պիտի առնուին :

— Երմաշի Դպրեմանքին անդրանին վեց վարդապետները իրենց սիրեցեալ ուսուցիչ Դուրեան Եղիշէ Եպիսկոպոսին շատ գեղեցիկ մատնի մը շինել տուեր են, խոշոր զմրուխտ քարի մը բոլորտիքը ճարտարօրէն շարուած ազամանն պերով :

— Ամերիկեան ու Գերմանական Որբանոցներու մէջ պատասպարուող Հայ որբերուն կրօնական դաստիարակութեան խնդրին ներկատմամբ նպաստաւոր կարգադրութիւն մը եղած է Պատրիարքարանի ջանքովը, որ պիտի հաղորդուի մամուլի միջոցաւ :

— Գաւառական վարժարաններու խնամակալութիւնն ալ, որ յաջորդած էր նա-

խորդ Միացեալ Ընկերութեանց, յաժապոյն հրամանաւ կաղմալուծուելով, անոր գոյքերը յանձնուած են Պատրիարքարանին :

— Պօղոս բաշա Նուպար նամակով շնորհակալութիւն յայտնած է 'ի պատրիարքարան, իր հօրը յիշատակին Մայր եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին համար : Օրմանեան Սրբազան մտադիր է եղեր Պօղոս բաշայի ուշադրութիւնը հրաւիրել վանայ կարօտեալներուն ու Որբանոց մը գործին :

ՏԵՂԱԿԱՆ

Խմբագրութիւնս այս շաբթու երկու նամակներ ստացած է, որոնք տեղւոյս ընտրողական ժողովոյ թոյլ վարմունքին դէմ դիտողութիւն կրնեն ու կառաջարկեն որ՝ տօնական օրերը վրայ չի հասած՝ նոր թաղականի ընտրութեան ձեռնարկուի, քանի որ 4^{1/2} ամիսներէ 'ի վեր ընտրուած Թաղ. խորհուրդը հակառակ այնքան եղած դիմումներուն՝ չի յստարեր պաշտօնին գլուխը անցնելու :

Շատ իրաւացի գտնելով նամակագիրներու պահանջը, այս մասին ընտրողական ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրենք :

Կը լսենք թէ, տեղւոյս Աղգ. վարժարանի ուսուցիչներէն Տիար Գէորգ Ղարիպեան, որ երկար տարիներէ ի վեր Ս. Եկեղեցւոյ մէջ երաժշտի պաշտօնն ալ կը վարէ այնչափ յաջողութեամբ, վաղը, կիրակի Կ. Պոլիս կը մեկնի քաղաքիս Ս. Պարգիս եկեղեցւոյն վրայ բահանայ ձեռնադրուելու համար :

Տ. Գ. Ղարիպեան, որ եկեղեցական օրինաց և երգեցողութեան բաւական հմտութիւն ունենալով հանդերձ պարկեշտ բընաւորութեամբը համակրելի եղած է, քաջայայտ ենք թէ, իր բահանայ ձեռնադրուելովը

արտասահմանի մէջ գտնուած պարտա-
ճանաչ քահանայից ցանցաւ թուոյն վրայ հաս-
մալ պիտի աւելնայ :

Անկեղծօրէն կրօնք թէ, տեղացի ազ-
գայինք լաւ ընտրութիւն մը ըրած են յան-
ձին Տ. Գեորգ Ղարիպեանի, որոյ համար ի
սրտէ յաջողութիւն կը մաղթենք :

ՅՈՒՆԻԱՆՈՎ ՀԱՅ ԲԱՀԱՆԱՆԵՐ

Սեփաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս Կ-
պիսկոպոս, վերջերս տեղւոյն եկեղեցւոյն հա-
մար ձեռնադրած 7 քահանաներուն հետեւ-
եալ անունները տուեր է.

Տէր Իրաւաբաւ . Տ. Թէոփիլոս . Տ.
Դեոկրիտիանոս . Տ. Կրօնիդէս . Տ. Ոնոփրիոս .
Տ. Սաքիկոս . Տ. Հուսիկոս :

Կրօնք թէ, եթէ ութերորդ մալ գըտ-
նուէր, զայն ալ պիտի կոչէ եղբոր Տ. Գե-
նարիոս կամ Տ. Ղուրդուխատիս :

Եթէ ամեն մէկ տօնելի սուրբի անու-
նով ներելի է կոչել հայ քահանան, ինչո՞ւ
ուրեմն Պետրոս սրբազան «Վարդան, Վահան,
Ղևոնդ, Տրդատ, Աբգար, Մեսրոպ, Սահակ
և այլ անունները չէ գործածեր, որոնք տօ-
նելի հայ սուրբեր են :

— Որովհետեւ, այդ հայ անունները
թէեւ օրացոյցին մէջ կան, բայց յաշս կա-
ռավարութեան մոռցիտը նկատուած ըլլալուն,
Պետրոս սրբազան առ ՚ի հաճոյակատարու-
թիւն զանոնք ուրանալով, իր ո՞ր աստիճան
ազգասէր հովիւ մը եղած ըլլալը անգամ
մալ կ'ուզէ հաստատել :

ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Յայտնի է որ Դ. կուսակցութեան օր-
կան Դրօշակ թերթը իր գոյութեան թուա-
կանէն ի վեր անարգանք չի մնաց որ չուղղեր
վեց մեծ տէրութեանց հասցէին, ու բնաւ օր
վը մտքէն չանցուց թէ Հայկական ինքրոյն
լուծումը դիւանագիտական միջոցներու ալ կը

կարօտի, ինչպէս եղաւ Ռուսական, Յու-
նական, Սերպիական, Չէռնակորական, Լի-
ւանանեան, Պուլկարական և վերջապէս Կը-
րէտական խնդիրներուն լուծումը :

Իսկ հիմա նոյն կուսակցութիւնը յար-
մար կը դառէ դիւանագիտական միջոցներու
կիրաւութիւնը. շատ լաւ. մեր կաթճիքով
այս ինքնին բարեփոխութիւն մը կը նշանակէ
Դաշնակցութեան ընթացքին մէջ, սակայն
գեղադրաբար այս բարեփոխութիւնը կը չե-
զոքանայ այն կէտ. լեզուով որ տէրութեանց
նկատմամբ գործածուած է վերջին յայտադ-
րին մէջ :


Չենք հասկնար թէ ի՞նչ օգուտ և ի՞նչ
նպատակ կրնան ունենալ այն նախատինքնե-
րը՝ որոնք կուսակցութեան կողմէ շարունակ
կ'ուղղուին Եւրոպայի և մասնաւորապէս Ռու-
սիայի, որոնց բարի կամեցողութիւնէն միայն
կրնանք սպասել մեր փրկութիւնը : Յետոյ,
ի՞նչ ահագին հակասութիւն նախատական լեզ-
ւով ստիպել մէկը բարիք ընել :

Հայհոյանքով ողորմութիւն չուզուիր :
Այս շատ լաւ գիտէ կուսակցութիւնը, բայց
անմեկնելի գաղտնիքը հոն է որ, ինչո՞ւ դիտ-
մամբ ասանկ փնասակար հակակասութեան մը
մէջ կը գտնուի :

Հանելուկ, որուն լուծումը կրնայ շատ
օգտակար ըլլալ ազգին :

ԾԱՆՕԹ.

(Այս նոր հակասութեան մէջէն դուրս
ելնելու համար ալ, Շարժումի մեծ փաստա-
բան գաբիթէն Լիոն Սէի հրաշալի (?) մէկ
պաշտպանողականին կը սպասուի անհամբեր :)



Հումնուէն կը գրեն .

« Կը լսենք թէ մօտակայ բաղաքի մը
մէջ գտնուած Հնչ . և Դաշ . կուսակցութեանց
ճիւղերը պիտի միանան : Կը մաղթենք որ այս
միացումը իրարու գլուխ փխշախ անցնելու
բաղաքականութեամբ եղած չըլլայ » :

ԶԱՆԱԶԱՆՔ

ՌՈՒԹԻՊՈՅ ԿԱՅՍԵՐ ԼԻՌՈՐԵԱՅ ԿԵԱՆՔԸ

Նիգօլա Բ. կայսրը տառապանքներով ժամը 8ին արթնանալով, ճուշ և արգուղարգը լուծընցնելէ ետքը ճաշասրահ կը մտնէ, ուր կայսրուհւոյն հետ կընէ նախաճաշը, որ կը բաղկանայ կաթ, թէյ և խաշած հաւկիթէ: Ժամը 9¹/₂ին՝ իւր աշխատութեան սենեակին մէջ, Թուս և օտար առաջնակարգ օրաթերթերը կը կարդայ: Ժամը 10 ու կէսին պարտէզ կ'իջնէ, ու կէս ժամ կը պտտի: Ժամը 11 ին նորէն իր աշխատութեան սենեակը երթալով, կառավարութեան վերաբերեալ գործերով կը զբաղի մինչև ժամը կէս. յետոյ՝ իրեն այցելութեան եկողները կընդունի: Ժամը 1 ու կէսին կայսրուհւոյն հետ ցորեկուան ճաշը կընէ: Բոլոր կերակուրները այսօր տաք կը պատրաստուին: Ճաշէն վերջը կայսրուհւոյն հետ կաթով և կամ ձիով մէկ ժամ կը պտտին. այս պտոյտէն ետքը կայսրուհին բարձր գոտակարգի տիկնանց այցելութիւնները կընդունի: Ժամը 4 էն մինչև 8 կայսրըն ալ առանձինն դարձեալ կառավարութեան վերաբերեալ գործերով կը զբաղի: Ժամը 8 ու կէսին իրիկուան ճաշը ընելու համար ճաշասրահ կը մտնէ: Կայսերական գերդաստանը ընդհանրապէս դուրսէն հրաւիրուած մէկ քանի հրաւիրեալներ կ'ունենայ իրեն սեղանակից: Ժամը 9 ու կէսէն մինչև կէս գիշեր Ն. Վեհափառութիւնը իրեն յատուկ սրահներէն մին առանձնացած, կարգալով և կամ նուազ զարնելով կը զբաղի:

Կայսեր կողմէ ընդունելութիւնը կըլլան հետեւեալ կերպով:

Նախ, պէտք է ըսել թէ՛ այսպիսի բազմի մը արժանանալը բաւական դժուարին է: Այցելութիւն տուող անձը՝ խիստ մաքուր և փայլուն հագուած պալատական երկու բարձրաստիճան պաշտօնեաներու միջոցաւ սրահ մը կառաջնորդուի, ուր իրեն թէյ և սիկանէզ հրամցուելէ ետքը՝ ուրիշ երկու պալա-

տականք ղինը կառաջնորդեն Կայսեր յատուկ թիկնապահներուն սրահը. թիկնապահ մը՝ այցելուին բազմը տը փոխիլը կը տանի կը ներկայացնէ 2 արին, որ քանի մը վայրկեանէն ետքը այցելուն կընդունի և անոր հետ շատ սիրալիր կերպով կը տեսակցի:


Ըսինք թէ Կայսերական գերդաստանին կերակուրները այսօր տաք կը պատրաստուին. առիթը կը ներկայանայ խոհանոցի մասին ալ մէկ քանի տեղեկութիւններ տալ ընթերցողաց: Կայսերական պալատի խոհանոցին ընդհ. վերտեսուէն է Ա. սեղանայարգար կոմս Պէ. կէնտօրֆ, որ առանց խոհանոց մտնելու, պէտք ինչո՞ւ կարգադրութիւնները կը հրամայէ: Ա. խոհարարին բով կը գտնուին 2 Գաղիացի խոհարարներ. Ա. խոհարարի տարեկանն է 250,000 ֆրանք, միւս երկու խոհարարաց տարեկանները 50,000 էն 100,000 ֆրանքին մէջն է. ասոնցմէ զատ, կան նաև 4 խոհարարապետներ, 38 խոհարար, 20 առաջին կարգի օգնական և 35 Բ. կարգի օգնական (եաւագ): Սաները, պնակները եւ այլ անօթները լուալու համար խոհարարաց տրամադրութեանը տակ կը գտնուին 200 աշակերտներ: Նպարեղէնները ու պատրաստուած ուտելիքները պահելու համար 18 մառնապէտ և 54 փոխմառնապէտներ կան: Բոլոր պատասխա՞ղ, զգալ ու դանակները, որոնք ոսկիէ և արծաթէ են, մաքրելով տեղը դնելու համար 84 սեղանայարգարներ (վիւժիէ) կան:

Ինչպէս ԵՐԿԱՐԵԼ ԿԵԱՆՔԸ — Ըստ Պ. Ռիչարտսընի՝ այժօր երկարակեցութեան ստանան է, որմէ հրաժարիլը երկարակեցութեան գլխաւոր գաղտնիքն է: Նոյնպէս պէտք չէ կուշտ ուտել, կըսէ Ռիչարտսըն, պէտք չէ օրը մէկ անգամ միայն հիւթեղ ճաշ ընել, այլ ճաշը երեք թեթեւ մասի բաժնել, ժամանակը ու որակը հաւասարապէս բաժնելով: Ծանր ծանր ուտել, մանր պատառներ առնել, լաւ ծամել. մատները ըստ կարի թիչ գպցնել կերակուրին. շատ շատ օրը երկու անգամ միւս ուտել՝ լաւ մը եփել տալէ ետ-

բը, ու չի մոռնալ որ պտուղն ալ սնունդի տեղ կը ընեն: Այն մարդը որ այս հրահան-
դը կը գործադրէ, ենթադրելով որ լաւ ու ա-
ռողջ կազմուածքով ծնած է. կարող է — պա-
տահան վտանգները հաշի չառնելով — հըն-
գապատիկ անցնիլ իր արրնութեան տարիքը,
այսինքն հինգ անգամ բսան և մէկ տարին,
որ ըսել է 105 տարի:

ՇՈՒՆԵՐՈՒ ԶԱՐԴԱՅՐԱՋ. — Անգլիոյ
մէջ շուներն հագուեցնելու և զարդարելու
համար վերջին աստիճան կարեորութիւն տալ
սկսած է, վասն զի այս վերջին քանի մը
տարիներու մէջ զերծակի 4-5 վաճառատուներ
քացուած են, որոց մէջ միմիայն շուներու
յատուկ պատրաստ զգեստեղէններ կ'ծախուին
կամ նոր ապսպրուածները կ'կարուին: Կան
շուներու յատուկ բժիշկներ նաև գերեզմա-
նատուներ: — Եւ քանի որ շուներու գերեզ-
մանատուն կայ, հարկաւ մեռելաթաղեր ալ
կան, չնչ գիտեր սակայն թէ մեռելաթաղ
բարոյական պաշտօնեաներ ալ ունին: — Անգլ.
թերթեր կը պատմեն թէ վերջերս, շուներու
յատուկ զարդարանաց (թուայէթի) սրահներ
ալ բացուեր են, ուր՝ փափաքողք իրենց շու-
ները տանելով լուալ տալով, անոնց ստենե-
րն իրենց ուզած ձևով յարդարել ու զար-
դարել կուտան:

ՆԱԽԱՊԱՅԱՐՄԱԿԱՆ



ԶԱՐԶԱՐԱՆՔԸ ԻՐԻՆԻ ԴԵՂ

«Անցեալ օր սրճարանի մը մէջ եր-
կու դաւառացի ազգայինք մեծ իրա-
րանցումի մէջ էին. ասոնցմէ մէկը ե-
րեսի վրայ պառկած էր, որուն դէմքը
կապուտցած ու աչքերը սովորականէն
աւելի խոշորցած ու քիչ մ'ալ դուրս ին-
կած էին. իր շարժուածքներէն ու տը-
քալէն կը հասկցուէր թէ հիւանդ էր:

Իսկ միւսը՝ անոր կռնակին վրայ ելած՝
ոտքով խաղող կոխելու կամ ետողաճիին
բազմոց շինելուն պէս անընդհատ կը կոխ-
կուտէր ամբողջ ողնայարին երկայնու-
թեանը:

— Ի՞նչ է այդ, ի՞նչ կընես, մար-
դուն ոսկորները պիտի կոտրես, պոռաց
անցորդ մը, որ այն միջոցին դարձի մը
պատճառաւ հոն կը գտնուէր:

— Իշա՛ն կընեմ կոր, որպէս զի փո-
րին ցաւը անցնի:

— Ի՛լաճ մի՛. . . եղբայր, մարդուն
աղիքները հիմա դուրս պիտի թափես.
դէմքին գոյնին նայէ՛, վա՛ր իջիր աղկէ
ու բժիշկի մը կամ գոնէ դեղարան մը
երթալով. . .

— Տօ՛. դեղարանը ի՞նչ է:

— Էղախանաւ ըսել է.

— Մեր երկիր անան՝ բժիշկ ու է-
ղախանա չի կայ. մենք լսանկ դեղե-
րով կը ռնտնանք:

— Կոխէ՛ սօ Ավսօ, կոխէ՛ կը պո-
ռար անդիէն ուրիշ մը:

— Ծօ խե՞նդ էք ի՞նչ էք. հիշ ա-
սանկով փորին ցաւը կանցնի:

— Բէք աղւոր կանցնի. սընկէ սի-
ճիւլի կտոր մը տուէք որ թան ալ կա-
պեմ, տուն մըն ալ Սաղմոս կը կարդամ
ու մէկ պահէն կանցնի կերթայ:

— Աւելի աղէկ չըլլա՛ր Սաղմոսէն
թուղթ մը բրցունէք ու կլլեցնէք, որ-
պէս զի վայրկենապէս բժշկուի:

— Տօ որւք անհաւատ էք. Աստու-
ծոյ չէ՛ք հաւատար. խէրիմն ի՞նչ է.
նա՛ստուած է:

— Ու մինչև որ ատոր փորին ցաւը
չանցնի, կռնակէն վար չի՛ պիտի իջնաս.

— Զէ՛ եա, հէլպէթ չի պիտի իջ-
նամ, ասանկ որ կընեմ իսէ, փորի ցա-
ունեցողը կաղեկցնեմ. անոր իլաճը ես
եմ:

— Աանանկ է նէ աֆէրիմ. . . ես
քու տեղդ ըլլամ, էճղախանաւ կերթամ

խախտանոցի մը մէջ կը մտնամ, փորի
ցաւ ունեցողներուն կը սպասեմ:

Ու բնական զայրոյթով մը առաւ
քալեց:

ԴԻՏՈՂ

(Տեղն է ըսել թէ, մեր գաւառա-
ցի կարգ մը նախապաշարեալ ազգա-
յինք, շատ անգամ զոհ կերթան մահ-
ուան, իբր դեղ առնելով այս և ասոր
նման չարչարանքները: Եւ որովհետեւ այս
կարգի եղբարք թերթ չեն կարդար և կամ
կարդալու գիւրութիւնը չունին, ուստի
հայ կղերին պարտքն է եկեղեցւոյ բե-
մէն այս տեսակ նախապաշարութեան
փնտռները հասկցնել ու զգուշացնել այդ
միամիտ դասակարգը:

«Հոգիս յօժար բայց մարմինս տը-
կար է» ըսող հեղութեան մեծ ներկա-
յացուցիչն անգամ այս խօսքերով ուզեց
հասկցնել թէ, հոգին ալ առողջ մարմի-
նի պէտք ունի:)

Պուրբէշի Տ. Յարութիւն բահանան ի-
րեն համար լաւ եկամուտի աղբիւր մը գտնո-
ւէ. կաղաց, կուրաց, բորոտաց, բոսացելոց եւ
ամենայն պէս պէս հիւանդութեանց դէմ հա-
մաշիջ կամ նուսխա կուտայ եղեր: Տէր
պապան այնչափ զբաղած է համաշիջ կա-
րելով, որ գլուխը բերելու ժամանակ չունի
եղեր:

Թոնովաի տէր պապան ալ գաւառացի
հայէ մը երկու ոսկի կը բրցորնէ անոր սովա-
տանջ ընտանեացը զրկելու խոստումով ու զայն
կը յանձնէ իր . . . ստամոքսին:

ՁԵԿՈՅՑ

Թիւրիմացութեան տեղի չի տալու հա-
մար կը ծանուցանենք թէ, «չունեցած առ-
նելիքներս գանձելու համար Մարտիկեա պիտի
երթամ» ըսելով մեկնող նշանուած պարոնը
այժմ փոքր Ասիա իր ծննդավայրը եղող
Ե. . . գաւառը կը գտնուի:

ԳՐՍԳԱՆՃ ԳՕՃԱ

ԿԻԼԻԻՆՃԼԻԻ ԳՕՄԷՏԻ ՊԻՐ ԲԵՐՏԷ

(Կէյէն Ախմետօսաւ)

Էրբ. — Մատամ, հէր պիր շոյ ա-
չիքեար օլտու, արթըդ պունուն լամը
ճիւրի գալմատը, հէրիֆ պուրատա տըր
վէսսէլամ, վէ սիլ տէ պէլքի օնունլա
պիրլիքտէ տիլ տիլէ շուրաճըգուս մու-
հապպէթ, թաթլը թաթլը սէօհպէթ-
լէր իտէյօրըտընըղտա պէն մանի օլ-
տում, հէ մատամ, մատամ, շու հէրիֆ
նէրէտ:

Մատ. — Պուրատա հէրիֆ մէրիֆ
եօգ աըր:

Էրբ. — Սէն իսթէտիին գատար օ-
նը սագլա, պէն շիմտի պուլուրում (քա-
պանձա ելիսիսէ սըշարը լըրլար)

Մատ. — Ճիօվաննի, տըրգաթ էթ
էլինտէն պիր գալա չըգմասըն, զիրա-
բէք հիտտէթլէնմիշ տիր:

Ճիօ. — Պէն նէ եաբապիլիլիւմ:

Մատ. — Սէն տէ շու իհթիեարը սա-
վամատըն կիթտի:

Ճիօ. — Վագըթ պուրապիլիյօրմը-
յում, կէօրմէյօրմըն պիլիւմ միւսիւ է-
վին տէօրթ թարաֆընը ֆըրըլ ֆըրըլ
տօլաշըյօր. (Պրիֆօյէ իյէրսէն)

Պրիբ. — Պէ ճանըմ պուրատա սը-
չան կիպի էզլիլիլ գալտըմ:

Ճիօ. — Պէսպէլի հէրիֆ քէօմիւր-
լիւքտէ սըչանլարըլա ուզըպշըյօր:

Մատ. — Իհթիեար քէօմիւրլիլիւտէ
մի:

Ճիօ. — Էօյլէ ա, նէրէյէ սաքլայըմ,
պիլիւմ միւսիւ նէ տօլապ պրագտը նէ
սանտըգ օտասը, հէփիլիլի գալմագա-
րըլ էթտի, պէնտէ հէրիֆի թութտու-
ղում կիպի քէօմիւրլիլիլ թըգատըմ:

Պրիբ. — (Եիզիւ կէօգիւ ֆէօմիւր քօ-
գունսաւ սիսիլիւմը) ճանըմ պէնի նի-
չի նէ քէօմիւրլիլիլ թըքատընըլ. էյ շիմ-
տի նէ գատար սէսիւ վարսա ճան գուր-
թարան եօգ տէյի պաղըրաճաըմ, վէ-
րին շու շաքիւմլա պատտօնըմը, շիմտի
կիտէճէիւմ, օֆ պու նէ պէլա եա:

ձիւ — Սահիւհ նէ ուղուրաւզ հէ-
րիֆիսին պէ.

Էրբ — (իւհրսեմ) Հա, սէսինի ալ-
տըմ, շիմտի եագալատըմ.

ձիւ — (Պրիֆօյէի իքերեֆ) Հայտէ
քէօմիւրլիւկէ, (պէօյէ իքմեֆսե իֆեմ,
էրֆօյէ իյերի կիւեր. պէ ինքիարա տօղ-
ու... քապաւննայր ուզաքարագ).

Էրբ — Պէ հէյ ալչագ ինթիեար,
քէնին պուրատա նէ իշին վար, սէն ալ-
չաքմասընա նամուսումու բայիմալ էթ-
տին էօյլէ մի, էօյլէ խէ կէպէր.

Մատ — Նէ եաքըյօրսըն էրքօյէ.

Էրբ — Նամուսումու ինթիեարմը-
նը ալսնաըմ... սէօյլէ պապալըմ պու-
նաք հէրիֆ, պուրայա նիշի՞ն կէլտին.

Պրիբ — Տուր, տուր, ածէլէ իս-
տէմէզ. պէն քէնտիմ կէլմէտիմ սէնին
մատամ տալէթ էթտի.

Էրբ — (հիսեքթի) Տէմէք մադամ
սիզ տալէթ էթտինիզ էօյլէ մի.

Պրիբ — Իշլէ տալէթ թէզքէրէ-
սի տէ պուրատա. ատամ սիզ նէ ահմագ.
ատամլարմըյօրսընըզ, հիշ պիւր ատամ
տիկէրինին հանէսինէ պալթա աամայա
հագգը վար մը տըր. շիմնի սիզ պանա
ճէվապ վէրմէլիսինիզ. (էրֆօյէ թեգֆե-
րէի ալր)

Էրբ — (մեֆթուպու օգույարագ) Պու
նէ... ալիզիմ գօնշումուզ միւսիւ Պը-
րիքօյէ... րէճա իտէրիմ պունտան
պէօյլէ պահճէ թարաֆընտաքի պիզիմ
էվէ նաղըր օլան բէնչէրէի գաբայընըզ,
զիրա զէվճիմ գըսգանճ օլտուղունտան
պէյհուտէ եէրտէ պէնի իւզիւյօր...
(իէնսի ֆէնսիմէ) նաֆիլէ մատամըն կիւ-
նահէնա կիրմիշիզ... շիմտի նասըլ
կէօյնիւնիւ ալմալը... (օգուր) զիհնին-
տէ էօյլէ թասալուր էթմիշ քի սէն պէ-
նիմ աշըքըմ պէն սէնին մաշուքան մ,
հալ պու քի սիզ պէնիմ պէօյիւ ք բէտէ-
րիմ մագամընտա օլտուղունուզ հալտէ...
(մեֆթուպու երքարագ) արթըզ եէթի-
շիւ. նաֆիլէ մասում գարընըզաղըմըն
գիւնահընա կիրտիմ... (միւսանա եագ-
աշարագ) աֆ իտէրսինիզ մատամ սի-
զէ գարըն չօգ պէօյիւք հաքարէթտէ
պուլունտում րէճա իտէրիմ, պէնի աֆ
իտինիզ.

Պրիբ — Էյի ա, շու պիւր քէրրէ պէ-

նիմ տուրաթըմա պիրտէ մատամըն եիւ-
զիւնէ պաղըպտա օնա կէօյէ գըսգանճ-
լըք էտէ իտին օլմալ մը իտի. պէն նէր-
տէ, մատամ նէրէտէ.

Էրբ — Հագգընըզ վար, լաքին չի
ֆայտէ, էլիմտէ տէյիլ տիւր. նէ հալ ի-
սէ, մատամ պէնի աֆ էթտինիզ ա.

Մատ — Պիւր շէյ տէյիլ, հէվսի կէ-
շէր. պիլիւրիմ պէնի սէվաիւնիզտէն ի-
շինիզէ գըսգանճլըք բէյտա էթտինիզ.
հալ պու քի էրքօյէ էյի պիլմիշ օլ քի,
նամուսումու մուհաֆալա էթմէյին պիւր
գատընլա հէր նէ եաքսանըզ, պաշա չը-
գամաղսընըզ. էվվէթ սիզէ աֆ իթտիմ,
չիւնքի պէնտէ սիզի սէվէրիմ.

Էրբ — Թէշէքքիւր իտէրիմ մա-
տամ.

Պրիբ — Իշ աննաշըլտը եա, վէրի-
նիզ շաքկամլա պաստօնըմը, պէն կիտէ-
յիմ, էմրինիզ իւզրէ մատամ, բէնչի-
րէի գաբայըմ քի, արթըզ արանըլտա
նիֆագ բէյտա օլմասըն.

Էրբ — Հայըր միւսիւ Պրիքօյէ,
պունտան պէօյլէ տէյիլ բէնչիւրէնիզ,
հանէմիզին գաբըսը պիզէ սիզէ աշըգ
տըր. իսթէտիլինիզ անտէ կէլիպ մա-
տամլա կէօրիւշէպիլիւրսինիզ.

ձիւ — (եագաշարագ) Էյ պանա
վատ էթտինիզ շէյ...

Էրբ — Հաթըրմտա տըր, եանի էլ-
պիսէ իլէ եիւզ ֆրանք.

Մատ — Հայըր միւսիւ էրքօյէ,
թարաֆըմտան եիւզ ֆրանք իւալէ ի-
տինիզ.

Էրբ — Տէմէք իքի եիւզ ֆրանք.

Պրիբ — Եիւզ տէ պէնտէն օլտուն.

Էրբ — Տէմէք իւշ եիւզ ֆրանք վէ
պիւր գաթ էլպիսէ, բէք սլա, բէք ալա,
ամա տըգգաթ էթ քի հըզմէթինտէ
գուսուր էթմէյէսին. շիմտի պիզէ պիւր
աղ եէմէք հաղըրլա: Գըսգանճլըգ չօգ
ֆէնա շէյ իմիշ, էյ տօսթլարըմ, պու կիւն-
քի մէսուրիէթիմիզէ պիւր տէլիլ օլ-
մագ իչիւն ճվւմէմիզ պիւրլիքտէ թաամ
իտէրիզ... պու կիւն պէնիմ էն մէսուտ
կիւնիւմ տիւր. չիւնքի սիզին սայէնիզտէ
պահտիեար օլտում:

(Խիքաւմ)

ԲԷՐՏԷ ԻՆԷՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺ ԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵԼԻ

Արցախին եւ Չառնչական
Շաքարահանդէսի

Գ. ՏԱՐԻ

 ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՐԴՈՂ Ա. ԵՐԵՍԸ

ՄԵՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔՍԼԱԲԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱԹԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ
Երաշխաւորեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50.000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25.000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ.

1898 Դեկտ. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" Փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16.000 "

Մէկ տիթերորդ տոմսակին գինն է,
Ոսկի Լէվ Սթ.

Ա. ամսոյ համար	1	25
Բ. " "	1	75
Գ. " "	2	87 1/2
Դ. " "	3	62 1/2
Ե. " "	2	87 1/2
Զ. " "	2	2 1/2
	14	40

Ասոնցմէ զատ կը գտնուին նաեւ քա-
ռորդ, կէս եւ ամբողջ տոմսեր, որոնց ար-
ժէքները համեմատաբար կաւելնան.

Գնելու եւ մանրամասն տեղեկու-
թեանց համար պէտք է դիմել սեղանա-
ւոր Տ. Սարգիս Գաբրիէլեանի, Վառնա,
Մոսկալա

ԲԱՆԱՍԵՐ

Հանդէս Հնարասական, Պասնական,
Լեզուաբանական եւ Բնական

որ պիտի հրատարակուի ի Պարիս
յառաջիկայ Մարտ ամսոյ վերջը,
Տնօրինութեամբ Կ. Յ. Բասմաջեանի
եւ աշխատակցութեամբ ազգային եւ օտար
արեւելագիտաց

Տիար Կ. Բասմաջեան, որ իր Հնարա-
սական ու Լեզուաբանական խնդրոց վրայ մին-
չե ցարդ պարբերական հանդէսներու միջո-
ցաւ հրատարակած հմտալից գրութիւններովը
ծանօթ է բանասիրաց, քաջայոյս եւ թէ
պիտի յաջողի այս ձեռնարկին մէջ ալ: Ջեր-
մապէս կը յանձնարարենք քաջալերել զինքը:

Բացուած է բաժանորդագրութիւնը
Տարեկան չորս գրքի համար՝ 20 ֆրանք,
ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն՝ առ
նուազն 100 էջէ բաղկացեալ՝ կ'արժէ ֆր. 6

Հասցէ.— ՊԱՄՄԱՃԵԱՆ 112, Պոլսոյ
Ռօշըշուառ: Բարիկ:

«ՀԱՆՌԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

Ուսումնասիրք

Տարեկան 10 ֆր. ոսկի, վեցամսեայ 6 ֆր.
կանխիկ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:
Հայ—Գրական յօդուածներէն զատ՝ ճշ-
դիւ տեղեկութիւն կը տրուի հայ—գրակա-
նութեան, պատմութեան, եւ այլն նկատմամբ
ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց
վրայ: Նշանակէս քննադատական տեղեկու-
թիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տըպ-
ուած կարեւոր լրերու վրայ:

«Ազգային լրագրաց բովանդակութիւն»
թղթակցութիւն, ծանուցում, եւ այլն:

Խմբագրութեան զրկուած ամէն գրե-
րու վրայ՝ քննադատական համառօտ տեղե-
կութիւն տալը պիտի շարունակուի:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печанница «Взаимность», — Варна.